Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
մարտի 7-ի N 350 - Ա որոշման

«Form C1. Փոխկապակցված ընկերությունների չմասնակցության մասին հավաստում
[ԹԵԿՆԱԾՈՒ / ԱՌԱՋԱՏԱՐ ԱՆԴԱՄԻ ԳԼԽԱԳԻՐ (ԵԹԵ ՀԱՍԱՆԵԼԻ Է)]

Ամսաթիվ՝___ _____2024 թ.

Առարկան	Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման և բաշխման և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման մեջ ներգրավված օբյեկտների շահագործման ու սպասարկման ընտրության կարգը
Ում	Ընտրության ընթացակարգն իրականացնող Գնահատող հանձնաժողովին

[*Թեկնածուի/Առաջատար Անդամի անվանումը*] սույնով հավաստում և երաշխավորում է, որ սույն նամակի ամսաթվի դրությամբ [Թեկնածուն/Առաջատար Անդամը] (ըստ կիրառելիության).

1. ՀԱՄԱՏԵՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

Ըստ իրեն հասանելի տեղեկատվության, որը ձեռք բերելու ուղղությամբ վերջինս կատարել է բոլոր անհրաժեշտ հարցումները և ուսումնասիրությունները, որևէ Փոխկապակցված ընկերություն Ծրագրի շրջանակներում չի ներկայացրել և մտադիր չէ ներկայացնել Որակավորման Հայտ (որպես առանձին Թեկնածու կամ Կոնսորցիումի Անդամ) կամ որևէ այլ կերպ Թեկնածուի/Առաջատար Անդամի մասնակցությանը զուգահեռ մասնակցել Ընտրության ընթացակարգին Որակավորման Հարցման պահանջների խախտմամբ:

2. ԾԱՆՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

[*Թեկնածուի/Առաջատար Անդամի անվանումը*] պարտավորվում է ապահովել Գնահատող հանձնաժողովին անհապաղ տեղեկացումը սույն հավաստման ամսաթվից հետո ի հայտ եկած որևէ այնպիսի հանգամանքի մասին, որի արդյունքում որևէ Փոխկապակցված ընկերություն Ծրագրի շրջանակներում կորոշի ներկայացնել (որպես առանձին Թեկնածու կամ Կոնսորցիումի Անդամ) Որակավորման Հայտ կամ որևէ այլ կերպ Թեկնածուի/Առաջատար Անդամի

մասնակցությանը զուգահեռ մասնակցել Ընտրության ընթացակարգին Որակավորման Հարցման պահանջների խախտմամբ:

3. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

[*Թեկնածուի/Առաջատար Անդամի անվանումը*] ընդունում և գիտակցում է, որ սույն հավաստման ներկայացումը հանդիսանում է իր՝ Որակավորման Ընթացակարգին մասնակցության նախապայման, և որ դրանում կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկությունների տրամադրումը կարող է հանգեցնել իր՝ Որակավորման Ընթացակարգից անհապաղ որակազրկմանը, ինչպես նաև իր նկատմամբ հետագա իրավական գործողությունների:

Հարգանքով՝
Լիազորված անձի ստորագրություն,
Անունը և պաշտոնը
Ստորագրող կազմակերպության անվանումը

Հասցե»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ